equiti CAPITAL

# ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ ՓԲԸ

# 2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ ԿԲ-ի կողմից 06.07.2015թ. ընդունված որոշման համաձայն ՀՀ կենտրոնական բանկը նախնական համաձայնություն է տվել Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա ՓԲ ընկերության կանոնադրական կապիտալում Էքուիթի Յուքեյ Լիմիթեդ ընկերության կողմից ուղղակի նշանակալից (100%) մասնակցություն ձեռք բերելուն:

Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա ՓԲԸ ձեռքբերումը հանդիսացավ Էքուիթի Յուքեյ Լիմիթեդ ընկերության մասնավոր հետաքրքրությունը ԱՊՀ, Միջին Արևելյան և Ասիական տարածաշրջաններում իրենց գլոբալ բիզնես հասանելիության և ընդլայնման համար: Այն Էքուիթի Յուքեյ Լիմիթեդ ընկերությանը հնարավորություն տվեց ունենալ ռազմավարական տարածք՝ ապագայում գլոբալ հաճախորդներին լավագույն աջակցություն ցուցաբերելու համար: Եվ վերջապես, Էքուիթի Էյ Էմ ընկերությունը պոտենցիալ հաճախորդներին հուսալիություն ներշնչում, քանի որ ընկերությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի կողմից, որն էլ իր հերթին հանդիսանում է ֆինանսական ծառայությունների ոլորտի կառավարման ռեգիոնալ առաջատարը:

Էքուիթի Յուքեյ Լիմիթեդ ընկերությունը ստեղծվել է 2010թ.-ի ապրիլի 7-ին որպես Անգլիայի և ՈՒելսի Մասնավոր Սահմանափակ Ընկերություն, որը լիազորված է և կարգավորվում է Ֆինանսական Կառավարման Մարմնի կողմից: Ընկերության պետական գրանցման համարն է՝ 07216039:

Էքուիթի Յուքեյ Լիմիթեդ ընկերությունը տրամադրում է իրացվելիություն ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ ինստիտուցիոնալ հաճախորդներին:

Էքուիթի Յուքեյ Լիմիթեդ ընկերությունը համագործակցելով PrimeXM (“PXM”)-ի հետ առաջիններից էր, որ առաջարկել է կամուրջի օգնությամբ կապել MT4 հարթակը PXM-ի կողմից մշակված Xcore հետ: Նշված առաջատար լուծումը շուկայում առկա առավել բարդ ինտեգրացման մեթոդն է, որը վերացնում է հապաղումները (latency) և էապես բարձրացնում արդյունավետությունը:

Էքուիթի ընկերությունը նպատակ ունի ընդլայնել իր ներկայիս հիմնական ծառայությունները ԱՊՀ, Միջին Արևելյան և Ասիական տարածաշրջաններում:

Էքուիթի ընկերության ներկայիս թիմը աչքի է ընկնում աշխատանքային մեծ փորձով բրոքերային ծառայությունների ոլորտում՝ իրականացնելով հետևյալ լիցենզավորված գործառնությունները.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը,
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը:
- Ընկերությունը 2018թ. ստացել է նաև “իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարումը” լիցենզիան:

Էքուիթի Էյ Էմ ընկերությունը մասնագիտացված է ֆորեքսի և ածանցյալ գործիքների առցանց թրեյդինգում՝ համապատասխան ծառայություններ առաջարկելով պրոֆեսիոնալ և ինստիտուցիոնալ հաճախորդներին: Ընկերությունը օգտագործում է ճանաչված և վստահելի թրեյդինգ հարթակներ, իսկ գործառնական ընթացակարգերը համապատասխանեցված են ՀՀ ԿԲ նորմատիվ պահանջներին:

2017թ. Էքուիթի ընկերությունների շահառուները էլ ավելի ընդլայնելով իրենց բիզնեսը ավելացրեցին խմբի կապիտալը՝ ներգրավելով նոր մասնակիցներ: Այս պահին Էքուիթի Քեփիթըլ Յու Քեյ ընկերության 100% բաժնետեր է հանդես գալիս Ջերսիում գրանցված Էքուիթի ընկերությունը (նախկինում Ջի Սի Սի Փի Բի ընկերություն):

2018թ. վերջում Էքուիթի խմբի ղեկավարությունը որոշում կայացրեց իրականացնել անվանափոխություն (ռեբրենդինգ): Արդյունքում Դիվիսա Յու Քեյ Ընկերությունը անվանափոխվեց Էքուիթի Քեփիթըլ Յու Քեյ Լիմիթեդ-ի, իսկ Դիվիսա Էյ Էմ Ընկերությունը Էքուիթի Էյ Էմ-ի:

Ընկերության գրասենյակը գործում է հետևյալ հասցեում ՝ ք. Երևան, Վ.Սարգսյան 26/1 փ., Էրեբունի Պլազա Բիզնես Կենտրոն, գրասենյակներ 607-609:

## ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- մշակել և առաջարկել ֆինանսական գործիքների լայն տեսականի
- կիրառել նոր մոտեցումներ և մատուցել բարձրորակ ծառայություններ

### ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2020թ.-ի ընթացքում Ընկերության ընդհանուր կապիտալը հասցնել առնվազն 1 000 մլն. դրամի:
- Մինչև 2020թ.-ի ավարտը բրոքերային գործառնություններ իրականացնող հաճախորդների թիվը հասցնել առնվազն 60-ի: Իսկ մինչև 2022թ.-ի ավարտը այն հասցնել նվազագույնը մինչև 300-ի:
- Մինչև 2020թ.-ի ավարտը հաճախորդներից ստացված գումարները հասցնել մինչև 25 մլրդ. դրամի, իսկ մինչև 2022թ.-ի ավարտը այն հասցնել նվազագույնը մինչև 35 մլրդ. դրամի:
- Մինչև 2020թ.-ի ավարտը հաճախորդների կողմից իրականացված գործառնությունների միջին ամսական ծավալը հասցնել առնվազն 6 000 մլրդ. դրամի, իսկ մինչև 2022թ.-ի ավարտը այն հասցնել նվազագույնը մինչև 8 000 մլրդ. դրամի:

## ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- 2020թ. տարվա վերջի դրությամբ ընկերության ընդհանուր կապիտալը կազմել է 960 563 հազ. դրամ: Ընկերության փաստացի և կանխատեսված տվյալների փոքր տարբերությունը բացատրվում է 2019թ. հունվարին ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված Ֆորեքս շուկային վերաբերվող նոր կանոնակարգով: Ընդունված խիստ կարգավորումների պայմաններում Ընկերությունը ոչ միայն չի կարողացել ներգրավել նոր հաճախորդներ, այլև ավելին, նոր պահանջներին շատ հաճախորդներ չեն բավարարել և արդյունքում Ընկերության հաճախորդների բազան կտրուկ նվազել է, որի

հետևանքով էլ զգալիորեն նվազել են նաև Ընկերության եկամուտները: Բացի այդ 2020թ. Ընկերության գործունեության վրա մեծ ազդեցություն են թողել նաև կորոնավիրուսային համավարակի, իսկ սեպտեմբերի վերջից արցախյան պատերազմի հետ կապված անորոշությունները:

- 2020թ.-ի ֆինանսական արդյունքներից ելնելով Ընկերության չբաշխված շահույթը կազմել է 78 794 հազ. դրամ: Թեև այն պակաս է պլանավորված 114448 հազ. դրամից, սակայն վերը նշված հանգամանքները հաշվի առնելով, Ընկերությունը արդյունքը գնահատում է բավարար:
- 2020թ. վերջի դրությամբ Ընկերության բրոքերային ծառայության հաճախորդների թիվը կազմել է 20, որից՝ 14 իրավաբանական անձ և 6 ֆիզիկական անձ: Բացի այդ, Ընկերությունը սպասարկում է նաև 33 միջնորդ (IB) հաճախորդ, որից՝ 13 իրավաբանական և 20 ֆիզիկական անձ: 2020թ. ընթացքում փակվել են նաև մի քանի հաճախորդների հաշիվներ:
- Ընդհանուր առմամամբ 2020թ. ընթացքում Ընկերության հաճախորդների կողմից ԱՄՆ դոլարով մուտքագրվել է 2 389 672 գումար և ելքագրվել 1 041 272, եվրոյով մուտքագրվել է 1 448 215 գումար և ելքագրվել 109,606 գումար, ֆունտ ստերլինգով մուտքագրվել է 5 033 524 գումար և ելքագրվել 675 000, իսկ ավստրալական դոլարով միայն ելքագրում է իրականացվել՝ 50 000 գումարի չափով: Ընդհանուր առմամբ մուտքագրվել է 5.14 մլրդ և ելքագրվել 1.01 մլրդ ՀՀ դրամին համարժեք տարբեր արժույթներ (հաշվարկը կատարված է ըստ ՀՀ ԿԲ հրապարակած փոխարժեքների):

- 2020թ. տարվա ընթացքում հաճախորդների կողմից իրականացված գործարքների միջին ամսական ծավալը կազմել է մոտ 2.4 մլրդ. դրամ.

## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶԱՑՈՒՄԸ

2020թ. տարվա վերջի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 348.68 մլն. դրամ, իսկ ընկերության ընդհանուր կապիտալը կազմել է 960 563 հազ. դրամ:

## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Բրոքերային ծառայություն**

2020թ. նախորդ տարվա համեմատությամբ Ընկերության հաճախորդների թիվը նվազել է 16-ով: 2020թ. վերջի դրությամբ Ընկերության կողմից սպասակվող հաճախորդների թիվը կազմել է 20, իսկ բրոքերային ծառայություններից ստացված զուտ եկամուտը՝ 270 424 հազ. դրամ, որը 95 601 հազ. դրամ գումարով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

**Ոչ հիմնական ծառայություններ**

Ընկերությունը հաճախորդներին մատուցում է տարբեր խորհրդատվական ծառայություններ, ինչպիսիք են՝

- Խորհրդատվություն արժեթղթերի շուկայում կապիտալի ներդրման վերաբերյալ,
- Խորհրդատվություն բաժնետերերի ընդհանուր ժողովներ անցկացնելու վերաբերյալ,
- Խորհրդատվություն բաժնետիրական ընկերության մասին տվյալներ հրապարակելու վերաբերյալ,
- Խորհրդատվություն բաժնետիրական ընկերությունների արժեթղթերը գրանցելու վերաբերյալ,
- Խորհրդատվություն բաժնետիրական կապիտալի կառավարման վերաբերյալ
- Խորհրդատվություն գնագոյացման վերաբերյալ,
- Խորհրդատվություն կանոնադրական կապիտալը փոխելու վերաբերյալ,
- Խորհրդատվություն կորպորատիվ կառավարման վերաբերյալ,
- Խորհրդատվություն համատեղ ձեռնարկություններ բացելու վերաբերյալ,
- Խորհրդատվություն ձեռնարկությունների կողմից բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և օտարման վերաբերյալ,
- Խորհրդատվություն ներդրումային նախագծեր պատրաստելու և իրականացնելու վերաբերյալ,

- Խորհրդատվություն ֆինանսական շուկայում կապիտալի ներդրման վերաբերյալ,
- Խորհրդատվություն ֆինանսավորման աղբյուրների որոնման և ներդրումներ ներգրավելու վերաբերյալ:

Ընկերությունը մատուցում է հետևյալ միջնորդական ծառայությունները.

- Միջնորդություն արտասահմանյան ներդրումներ ներգրավելու գործում.
- Միջնորդություն հասարակական կազմակերպությունների համար ֆինանսական միջոցներ ներգրավելու գործում (ֆանդրայզինգ).
- Միջնորդություն ներդրումային ծրագրերի պատրաստման և իրականացման գործում:

2020թ. ընթացքում Ընկերությունը 18 539 հազ. դրամ գումարի խորհրդատվական ծառայություններ է մատուցել :

## ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2020թ. Ընկերության հիմնական եկամուտները ձևավորվել են մատուցված բրոքերային ծառայությունների միջնորդավճարներից և տոկոսային եկամուտներից: Այդ հոդվածներով ստացված եկամուտը կազմել է համապատասխանաբար 770 752 հազ. դրամ և 45 617 հազ. դրամ:

Ընկերության ծախսային մեծ հոդվածներից են վճարված միջնորդավճարները, աշխատավարձային և վարձակալության հոդվածները, որոնք 2020թ. վերջի դրությամբ կազմել են համապատասխանաբար 500 328 հազ. դրամ, 208 797 հազ. դրամ և 24 529 հազ. դրամ: Վարչական ծախսերի ավելացումը 2020թ. պայմանավորված է ինչպես Ընկերության աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմամբ, այնպես էլ պարգևատրումների վճարմամբ: Վարձակալության վճարների բարձրացումը կապված է Ընկերության կողմից նոր ավելի բարձրակարգ գրասենյակային տարածքի վարձակալմամբ: COVID-19 համավարակով պայմանավորված պլանավորված գործուղման ծախսերը չեն իրականացվել:

## ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Ընկերությունը իր առաջին հաճախորդի համար բրոքերային հաշիվ է բացել 2015թ. դեկտեմբերի վերջին: 2016թ. վերջի դրությամբ Ընկերությունն արդեն սպասարկում էր 36 հաճախորդ, 2017թ.՝ 41 հաճախորդ, իսկ 2018թ. վերջի դրությամբ՝ 58 հաճախորդ: Սակայն 2019թ. Ընկերության հաճախորդների քանակը կտրուկ նվազել է՝ պայմանավորված Ֆորեքս շուկայի կարգավորման խստացմամբ: Ընկերության հաճախորդների քանակը նվազել է նաև 2020թ.-ին: Ընկերությունը հաճախորդների քանակը ավելացնելու նպատակով 2019թ.վերջին երեք նոր աշխատակից է ընդունել, որոնք իրականացնում էին հաճախորդների ներգրավման աշխատանքներ, սակայն 2020թ-ին Ընկերությունում հաճախորդների ներգրավման գծով աշխատում էր միայն մեկ աշխատակից:

Տնօրեն՝ Արտակ Նահապետյան

Ֆինանսական վարչության

ղեկավար՝ Գայանե Հովհաննիսյան